ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 60/4

16-ը հունիսի 2022 թ.

«Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ում փոփոխություն կատարելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է՝

1. «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգի (հաստատված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտխորհրդի 10.06.2017թ. թիվ 24 նիստում) 4.6 կետում ներկայացված օրինակի վերջին նախադասությունում «Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում նվազագույն 8 միավորի շեմը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նախորդ անբավարար միավորը, տվյալ օրինակի դեպքում՝ 7» նախադասությունը փոխարինել «Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում դրական նվազագույն 8 միավորի շեմը, բայց բարձրացնում է գնահատականը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նոր միավորը» նախադասությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Հ. ՄԱԿԱՐՅԱՆ